

ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆՑՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ (սոցիոլոգիական վերլուծություն)

Գ. Մ. ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

Ընտանիքը կարելի է դասել սոցիալական այնպիսի երևույթների շարքին, որոնց նկատմամբ գիտական հետաքրքրությունը երբեք չի մարում: Դա պայմանավորված է ընտանիքի՝ հասարակության կենսագործունեությունն ապահովող կարևորագույն օղակներից մեկը լինելու հանգամանքով: Ընտանիքն արտացոլում է հասարակության զարգացումը, ճղգնաժամն ու հակասությունները: Հայտնի է, որ կայուն հասարակություններում ընտանիքների պահպանման և զարգացման հնարավորություններն ավելի լայն են: Այդ տեսանկյունից շատ հետաքրքիր է քննարկել հայ ընտանիքի զարգացման առանձնահատկությունները՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ամուր և առողջ հասարակության հիմքը ամուր և առողջ ընտանիքն է:

Վերջին տասնամյակում Հայաստանում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, քաղաքական և արժեքային արձատական փոխակերպումներն իրենց կնիքն են դրել նաև ընտանիքի վրա: Այդ է պատճառը, որ համեմատաբար հարթ, ոչ ճգնաժամային զարգացում ապրած հայ ընտանիքն այսօր հայտնվել է դժվար կացության մեջ: Գիտական գրականության մեջ տարածված է այն կարծիքը, որ հայ ընտանիքը ճգնաժամ է ապրում¹: Նվազել է ամուսնությունների և ծնելիության գործակիցը, ավելացել են ամուսնալուծությունները, մվազել է ընտանիքի՝ որպես սոցիալականացման առաջնային ազնուտի և ազգային արժեքների պահպանողի ու փոխանցողի դերը: Այս ամենից կարելի է եզրակացնել նաև, որ հայ ընտանիքն այսօր ի վիճակի չէ լիովին իրականացնելու իր՝ հասարակությունը կայունացնողի դերը:

Ընտանիքի զարգացման անբարենպաստ գործոնների առկայությունն արդիական է դարձնում այդ միտումների ախտորոշման և կանխման ուղիների փնտրումը, ինչպես նաև՝ ընտանիքի ձևերի, կառույցների, գործառնության և փոխակերպման մեխանիզմների ուսումնասիրումը:

Հայ ընտանիքի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու և փոփոխման միտումները կանխատեսելու համար հարկավոր է դիտարկել վերջինիս զարգացման դիմափական, այսինքն՝ անցյալը, ներկան և ապագան:

Կատարված պատմասոցիոլոգիական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ հայ ընտանիքի ձևերը և կառույցները ձևավորվել են Հայաստանում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական, քաղաքական, արժեքային և կրոնական փոփոխությունների ազդեցության ներքո, որոնց շարքում, հատկապես, կարևոր են տնտեսական հարաբերությունները: Տնտեսական գործոնի կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ընտանիքի ձևերը արտադրաեղանակի զարգացման ակտիվ տարրերն են, քանի որ դրանք հիմնականն են աշխատուժի վերարտադրման, սեփունդների աշխատանքային ունակությունների և փորձի փոխանցման հարցերում²: Հետևաբար, տնտեսական հարաբերությունների փոփոխմանը զուգահեռ ընտանիքը ևս փոխվում է: Ամերիկացի սոցիոլոգներ Նիմկոֆը և Միդլետոնը ևս այդ կարծիքի են՝ նշելով, որ գոյատևման ձևերի և ընտանեկան նմուշների

¹ «Հայ ընտանիքի ներկան և ապագան», թեզիսներ գիտաժողովի զեկուցումների (27-29-ը ապրիլի), Երևան, 1994:

² Տե՛ս Wally Seccombe, A. Millennium of Family Change: Feudalism To Capitalism In Northwestern Europe, Verso, 1995, էջ 11:

միջև սերտ կապ գոյություն ունի: Նրանք 4 գործոն են առաջադրել, որոնք ազդում են ընտանիքի մնուլների փոփոխության վրա³.

1. սննդապահովման կայունությունը և առատությունը,
2. ընտանիքի՝ որպես աշխատուժի միավորի, պահանջարկի մակարդակը,
3. սննդապահովման նպատակով աշխարհագրական մոբիլությունը,
4. սեփականության բնույթը և նշանակությունը:

Այսպիսով, ընտանիքի նկատմամբ կիրառելով ֆորմացիոն մոտեցում՝ կարող ենք եզրակացնել, որ յուրաքանչյուր հասարակական-տնտեսական ֆորմացիա յուրովի ազդեցություն է ունեցել ընտանիքի զարգացման վրա: Մասնավորապես, նախնադարյան հայ ընտանիքը եղել է նուկլեար, որը, սակայն, գոյատևել է ավելի մեծ ազգակցական ընտանեկան խմբի շրջանակներում: Դա պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ փոքր կամ ամուսնական ընտանիքի ֆունկցիոնալ նշանակությունը սահմանափակվել է վերարտադրողական ֆունկցիայով, մինչդեռ ազգացրական խումբը կամ գերդաստանը եղել են բազմաֆունկցիոնալ: Այն կատարել է երեխաների սոցիալականացման, տնտեսական ապահովման, գերդաստանի անդամների խնամքի և այլ կարևոր ֆունկցիաներ: Հետևաբար՝ չունենալով գոյատևման կայուն միջոցներ և մասնավոր սեփականության ժառանգման մեխանիզմ՝ նախնադարյան ընտանիքի համար կարևոր է եղել գերդաստանի գոյության պահպանումը: Այդ պատճառով, գերդաստանի գլխավորի ընտրության հիմքում ընկած են եղել ոչ թե տարիքային առանձնահատկությունները, այլ հնարամտությունը, խելացիությունը, աշխատասիրությունը, հատկանիշներ, որոնք կօգնեին մարդուն այդ պայմաններում կերակրել ընտանիքը: Կամայք այս ընտանիքում ևս բարձր դիրք են ունեցել, ինչը պայմանավորված է եղել գոյատևման միջոցների հայթաթման գործում նրանց ունեցած մեծ ներդրմամբ:

Ստրկատիրական հարաբերությունների առաջացումն իր կնիքն է դրել ընտանիքի ինստիտուտի և ամուսնության ձևերի վրա: Հասարակությունում առկա շերտավորումը վերարտադրելու համար ամուսնության հիմնական պահանջ է դարձել ամուսնացող կողմերի հավասար դասային պատկանելությունը, տղամարդու բազմակնության իրավունքը և կնոջ մենամուսնության պարտականությունը⁴: Վերջիններս ավելի շուտ ստրկատիրական հարաբերությունների հետևանք են եղել, քանի որ միայն մեծատոհմիկ տղամարդիկ են օգտվել այդ արտոնությունից: Ստրկատիրական հարաբերությունների և մասնավոր սեփականության զարգացման հետևանքով տիրապետող են դարձել ընտանիքի երկու ձև՝ նահապետական մեծ և անհատական փոքր ընտանիքներ: Այստեղ հարկ է նշել, որ ընտանեկան ձևերի հայպիսի բազմազանությունը պայմանավորված է եղել արտադրության միջոցների նկատմամբ ունեցած սեփականության ձևերով: Որպես կանոն մեծ գերդաստանային ընտանիքներ ունեցել են հողատեր համայնականները, որոնք իրենց ընտանիքի համար աշխատուժ են վերարտադրել, մինչդեռ սակավահող համայնականները և ծառաադախիները, ընդհակառակը, ձգտել են սակավահող ընտանիք ունենալ, որպեսզի կարողանան ապահովել ընտանիքի գոյությունը: Այդ ժամանակվա ընտանիքը բնութագրվել է տղամարդու անսահմանափակ իշխանությամբ, որտեղ կարևորվել են արական սեռի գծով արյունակցական կապերը: Կնոջ դերը սահմանափակվել է որդեծին էակի և անվճար աշխատող ձեռքի դերերով: Ժառանգության հարցում մեծ դեր է ունեցել տարիքային և սեռային գործոնը:

Ֆեոդալական հասարակարգում սերտ կապ է գոյություն ունեցել հողատիրության, ամուսնության և ընտանիքի վերարտադրության միջև⁵: Այս դարաշրջանում ընտանիքի տիրապետող ձևն անհատական ընտանիքն է եղել: Սա, անշուշտ, պայմանավորված է եղել սեփականատիրական կենտրոնախույս ձգտումներով և բնորոշ է եղել առավելապես իշխողներին: Սակայն ֆեոդալական հասարակության պայմաններում փոքր ընտանիքը, որպես ուրույն միավոր, հանդես չի եկել: Այն օրգանապես ձուլված է եղել գերդաստանին, որտեղ անդամների թիվը տատանվել է 20-80 հոգու սահմաններում: Վերջինիս բնորոշ է եղել ամուր

³ Տե՛ս A. S. Skolnick, J. H. Skolnick, Family in Transition: Rethinking Marriage, Sexuality, Child Rearing, and Family Organization, Boston, 1971, էջ 132:

⁴ Տե՛ս Ս. Հ. Հովհաննիսյան, Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում (IV-IX դդ.), Երևան, 1976, էջ 59:

⁵ Տե՛ս Wally Seccombe, նշվ. աշխ., էջ 38:

համախմբվածությունը և իր անդամներին աջակցելու պատրաստակամությունը: Այստեղ շատ կարևոր են եղել ազգակցական թաղերը, նույնիսկ հողաբաժանման ժամանակ հաշվի է առնվել ոչ թե առանձին ընտանիքների, այլ ազգակցական թաղի կազմը: Ծնողների և զավակների սեփականատիրական իրավունքները պայմանավորված են եղել հասարակության մեջ հաստատված հայրիշխան հարաբերություններով, ընտանիքի անդամների նկատմամբ հոր մեծ իրավունքով: Բնամթերային տնտեսության պայմաններում աշխատանքի բաժանումը տեղի է ունեցել տարիքային և սեռային սկզբունքով: Այսպիսով, ֆեոդալական ընտանիքն առավելապես ենթարկված է եղել խմբի շահերին: Այդ կապակցությամբ ազգագրագետ Է. Կարապետյանը գրում է. «Վաղ ավատական Հայաստանում հասարակության տնտեսական բջիջն էր փոքր ընտանիքը, իսկ սոցիալական կազմակերպման հիմնական ձևը՝ գյուղական կամ տերիտորիալ համայնքը»⁶:

XIX դարում բուրժուական հարաբերությունները քայքայելով բնամթերային տնտեսությունը, խարխլեցին մասնատվածության և գերդաստանի հիմքերը: Հայ ավանդական ընտանիքը ապրանքային հարաբերությունների ու շուկայական կապերի ազդեցության ներքո սկսեց կորցնել իր ինքնավար բնույթը՝ չկարողանալով նախկինի պես իր ձեռքում պահել սեփական տնտեսավարման և երիտասարդների սոցիալականացման ֆունկցիաները: Հայ իրականության մեջ վաղուց սկսված միգրացիոն շարժերը, աշխարհիկ դպրոցի գործունեությունը, վարձու աշխատանքի ու առևտրի ծավալումը, ծնողների հեղինակության նվազումը, կանանց ու պատանիներին վարձու աշխատանքի ոլորտում ներգրավվելը, անհատական վերընթաց մոբիլությունը և անձի ձևավորման նոր փուլը՝ մարդկանց քաղաքացիական իրավունքների արմատավորմամբ հանդերձ, հին ընտանիքի վերջնական փլուզման պատճառը դարձան: Անցյալ դարի վերջերին Հայաստանում նկատվեց մեծ ընտանիքների քայքայման միտում. փոքր ընտանիքը տիրապետող էր դառնում քաղաքային պայմաններում: Գյուղերում այս գործընթացն ավելի դանդաղ էր ընթանում:

Հոկտեմբերյան հեղափոխությունը արմատական փոփոխության ենթարկեց արտադրահարաբերությունները և հասարակության սոցիալական կառուցվածքը, ինչը մեծ ազդեցություն ունեցավ մասնատվածության և կառույցների վրա: Փոփոխության ենթարկվեցին ընտանիքի ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ խմբային տարրերը: Կնոջ և տղամարդու օրենսդրական իրավահավասարության, կրթության մատչելիության և աշխատանքային շուկայում կանանց լայն ընդգրկման հետևանքով արմատապես փոխվեցին ընտանիքի իշխանության, դերային և հաղորդակցական կառույցները: Ամուսնությունը դադարեց խնամակալի շահերին խստորեն ծառայելուց, փոխարենը այն ծառայեցվեց պետությանը: Վերլուծելով խորհրդային ժամանակահատվածում ընտանիքի փոխակերպումները՝ կարելի է եզրակացնել, որ գրկված լինելով արտադրության միջոցների սեփականության իրավունքից և տնտեսական ֆունկցիայից, կախվածության մեջ լինելով սոցիալական բարիքների բաշխումից՝ ընտանիքը չկարողացավ կուտակել այնքան միջոցներ, որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանար ապահովել իր տնտեսական անվտանգությունը: Եվ դա է պատճառը, որ, խորհրդային պետության փլուզմամբ պայմանավորված, սոցիալ-տնտեսական ցնցումների հենց առաջին իսկ տարիներին հայ ընտանիքների մեծ մասը հայտնվեց աղքատության մեջ: Նախորդող և հաջորդող հասարակարգերի արժեքային իրարամերժության պատճառով թուլացավ մասնատվածության և ընտանիքի՝ որպես սոցիալականացման առաջնային ագենտի, դերը: Այնուամենայնիվ, լինելով համեմատաբար փակ համակարգ և սոցիալական ժառանգականության փոխանցման հիմնական մեխանիզմ՝ խորհրդային կարգերի օրոք հայ ընտանիքն, ընդհանուր առմամբ, կարողացավ պահպանել իր ավանդական արժեքները, նորմերը և սոցիալ-մշակութային որոշակիությունը:

Այսօր հայ ընտանիքը կրկին կանգնած է արմատական փոխակերպումների շեմին, որոնք պայմանավորված են 1988 թ.-ից հետո ծավալված տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային փոխակերպումների, աղետալի երկրաշարժի և դարաբալյան պատերազմի հետևանքներով: Տեղի ունեցած հասարակական փոխակերպումները առաջ են բերել ընտանիքի ինստիտուտի դերի արժեզրկում, տասնամյակների ընթացքում մշակ-

⁶Չ. Թ. Կարապետյան, Родственная группа "азг" у армян (вторая половина XIX - начала XX в.), Ереван, 1966, с. 6.

ված վարքային ստերեոտիպերի խնայելուն և անպաշտպանվածության ու հասարակություն-
նից օտարացման զգացում:

Մոցիալ-տնտեսական ռեֆորմների հետևանքով այսօր ընտանիքի նուկլեարիզացիայի միտում է նկատվում: Գյուղերում ընդարձակ ընտանիքների տրոհմանը նպաստեց առաջն-
լայես հողի սեփականաշնորհումը: Հողատարածքներ ձեռք բերելու նպատակով ընդար-
ձակ ընտանիքները տրոհվեցին առանձին փոքր ընտանիքների: Քաղաքում ընտանիքների տրոհմանն աջակցեց «Փարոս» համակարգի գործառնությունը: Դրա հետ կապված՝ թե քա-
ղաքային և թե գյուղական ընտանիքներում այսօր առկա է սակավազավակության միտում:

Ինչ վերաբերում է ընտանիքի իշխանության կառույցում տեղ գտած փոփոխություննե-
րին, ապա, չնայած ընտանիքի իրական կյանքում տեղի ունեցած ռեալ տեղաշարժերին, կապված կանանց կողմից ընտանիքի կերակրման գործում ունեցած մեծ ներդրման հետ, սեռադերային ստերեոտիպերը և իշխանության ներընտանեկան բաժանման ավանդական պատկերացումները դեռևս շարունակում են իշխել: Սակայն, դրան զուգահեռ, ընտանիքում նկատվում է հավասարության միտում: 1998 թ. ք. Երևանում անցկացված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների համաձայն, հարցված ընտանիքների 59%-ը գտնում է, որ իրենց ընտանիքում կարևոր որոշումները կայացվում են համատեղ՝ բոլորի մասնակցու-
թյամբ⁷: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ տղամարդու միանձնյա իշխանությունն ի-
րականում սահմանափակման միտում ունի:

Ընտանիքի դերը սոցիալականացման գործընթացում նվազել է: Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ ծնողների ընտանիքն այսօր զավակների համար որպես մոդել չի ծա-
ռայում: Նույն հետազոտության համաձայն՝ դեռահասների միայն 34%-ն է ընտանիքի իր ի-
դեալը նույնացնում ծնողների ընտանիքի հետ:

Անկում է ապրել նաև ընտանիքների հասարակական դիրքը: Անկախացումից հետո, երկ-
րի սոցիալ-տնտեսական ծանր պայմանների հետևանքով, ընտանիքների մեծ մասը, չունենալով տնտեսական անվտանգությունն ապահովող միջոցներ, հայտնվեց նյութական ծանր կացու-
թյան մեջ: Նշված սոցիոլոգիական հետազոտության տվյալներով՝ ընտանիքների գրեթե կեսը չի հարմարվել ներկայիս պայմաններին և գտնվում է հասարակության հետ հակադրության մեջ:

Ընդհանրացնելով հայ ընտանիքի զարգացման միտումները ապագայի վերաբերյալ կարելի է որոշ կանխատեսումներ անել, մասնավորապես.

• քաղաքային և գյուղական ընտանիքները կզարգանան տարբեր ուղղություններով, քանի որ քաղաքային ընտանիքների գոյատևման ռազմավարությունը տարբեր է գյուղա-
կանից: Դրանով իսկ պայմանավորված՝ գյուղական ընտանիքները կզարգանան ընդար-
ձակվելու, իսկ քաղաքային ընտանիքները՝ նուկլեարիզացիայի միտումներով,

• այդ նույն հանգամանքով և սեփական աշխատուժի վերարտադրման անհրաժեշտու-
թյամբ պարտադրված քաղաքային ընտանիքները կձգտեն սակավազավակության, իսկ գյուղական ընտանիքները՝ բազմազավակության,

• ընտանիքի դերային կառույցում տեղի կունենա վերաբաշխում՝ հանձին կանանց դե-
րերի փոփոխման: Սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները վկայում են, որ կանանց դերն ընտանիքի գործառնման ոլորտում շեշտակիորեն կաճի,

• ընտանիքի իշխանության կառույցում ևս տեղի կունենան որոշ փոփոխություններ. քաղաքային ընտանիքներն ավելի շատ կզարգանան հավասարության ճանապարհով, իսկ գյուղական ընտանիքները՝ հայրիշխանության,

• հատկապես քաղաքային ընտանիքում ավանդույթներն իրենց տեղը կգիջեն նոր լիբե-
րալ արժեքներին և համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված հմտություններին,

• գյուղական ընտանիքը կամրապնդի ազգակցական կապերը, մինչդեռ քաղաքային ընտանիքի համար իշխող կլինեն բարեկամական և ընկերական հարաբերությունները,

• քաղաքային ընտանիքն ավելի խոցելի կդառնա, քանի որ վերջինիս եկամտի աղբյուր-
ները հեռու են կայուն լինելուց, իսկ գյուղական ընտանիքը կցուցաբերի կայունացման մի-
տում՝ հիմնված գյուղատնտեսությամբ ապահովող երաշխիքի վրա:

⁷ Հարցման են ենթարկվել հարյուր 9-րդ դասարանցիներ և նրանց ծնողները: Հարցման նպատակն էր բացահայտել դեռահասների ամուսնաընտանեկան դիրքորոշումները և ընտանիքի դերն այդ դիրքորոշումների ձևավորման հարցում: Հարցման ժամանակ կիրառվել են ստանդարտացված հարցազրույցի և հարցաթերթիկային հարցման մեթոդները:

Հարկ է նշել, որ հայ ընտանիքի ֆունկցիոնալ ձևերի և կառույցների զարգացումը մեծապես պայմանավորված է ընտանիքի նկատմամբ տարվող սոցիալական քաղաքականությանն ուղղված քաղաքականության դիրքով:

Բանն այն է, որ ներկա սոցիալական քաղաքականությունն ուղղված է միայն ծայրահեղ անպաշտպան բնակչության նվազագույն կարիքները հոգալուն և հեռու է սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված: Սոցիալական քաղաքականության հայեցակետը դեռևս մնում է չհստակեցված, սկզբունքները՝ չպարզեցված: Այն շարունակում է համապատասխանել պահի պահանջներին և հնարավորություններին, չի պաշտպանում հայ ընտանիքը և չի կանխարգելում ընտանիքի զարգացման՝ բացասական միտումները: Ընդհակառակը, տարվող սոցիալական քաղաքականությունը, ընտանիքին թելադրելով սեփական պայմանները, մղում է վերջինիս նոր անբարենպաստ կառուցվածքային և վարքային փոփոխությունների: Այս միտման պահպանումը կհանգեցնի ընտանիքի՝ որպես սոցիալական ինստիտուտի, դիսֆունկցիոնալության ուժեղացմանը:

Այսօրվա սոցիալական քաղաքականությունը պետք է լրջորեն աջակցի ընտանիքին՝ որպես սոցիալական ինստիտուտի, արտացոլի ազատական տնտեսության պայմաններում հասարակության և ընտանիքի հարաբերությունների առանձնահատկությունները և հնարավորինս կանխի ընտանիքի ձևերի, կառույցների և վարքի անբարենպաստ փոփոխություններն ու միտումները: Մյուս կողմից՝ ընտանիքի զարգացման դրական միտումները խրախուսելու համար այդ քաղաքականությունը պետք է լիարժեքորեն համապատասխանի ընտանիքի և նրա անդամների կարիքներին:

Սոցիալական քաղաքականության արդյունավետության բարձրացման կարևորագույն նախապայման է համարվում սոցիալական քաղաքականության ապակենտրոնացումն ու տեղայնացումը: Խոսքը սոցիալական քաղաքականության ոչ միայն ազգային, այլևսինքն՝ կենտրոնացված, այլ նաև մարզային՝ տեղայնացված, քաղաքականության իրականացման մասին է: Ապակենտրոնացված սոցիալական քաղաքականությունը հնարավորություն է ընձեռում օգտագործելու տեղի ներուժը, ինչպես նաև բազմապատկելու քաղաքականության սուբյեկտների թիվը և ջանքերը:

Հայտնի է, որ կենսամակարդակի կտրուկ անկման փուլն արդեն անցել է և ընտանիքներն այսօր ունեն պահանջմունքների և հնարավորությունների տարբեր մակարդակներ: Հետևաբար, ընտանիքի նկատմամբ տարվող քաղաքականության արդյունավետության մյուս նախապայմանը պետք է լինի ընտանիքների նկատմամբ տարբերակված մոտեցման ցուցաբերումը: Այդ տեսանկյունից՝ այսօր կարևոր նշանակություն է ձեռք բերում նաև սոցիալական քաղաքականության տեխնոլոգիաների ընտրամիջոցով՝ ոչ նյութական լծակների կիրառմամբ, և ծառայությունների ցանցի զարգացմամբ, որոնք կարող են մասնագիտական աջակցություն ցուցաբերել դրանց կարիքն ունեցող ընտանիքներին:

Ընդհանրացնելով հարկ է նշել, որ հայ ընտանիքի նկատմամբ տարվող սոցիալական քաղաքականությունը կարող է և պետք է կանխի հայ ընտանիքի դիսֆունկցիոնալ ձևերի և կառույցների գործառնումը, քանի որ դա անհրաժեշտ է ոչ միայն ընտանիքի, այլ նաև հասարակության կայունացման համար: Հետևաբար, ժամանակն է մշակել ընտանեկան քաղաքականության ազգային մոդելը՝ համապատասխանեցնելով ընտանիքի և հասարակության շահերը: Այն պետք է խրախուսի ընտանիքի տնտեսական ակտիվությունը, արժեքային նոր համակարգի յուրացումը և վերարտադրումը, երիտասարդ ընտանիքների ժողովրդագրական վարքի ակտիվացումը, կանխի ընտանիքի անցանկալի միգրացիոն ռիսկերը, ընտանիքի ներսում դերային անբարենպաստ շեղումները, ակտիվացնի ընտանիք-պետություն հետադարձ կապը:

Г.М.Тадевосян, - Прошлое, настоящее, будущее армянской семьи (социологический анализ). - В статье анализируются трансформации армянской семьи, имевшие место параллельно социально-экономическим, политическим и культурным трансформациям в обществе. Произошедшие в Армении в течении последнего десятилетия коренные перемены оставили свой след и на армянской семье. В этом причина того, что армянская семья чье историческое развитие в основном носило ровный, а не кризисный характер, сегодня попала в трудную ситуацию. Автор отмечает, что наличие подобных неблагоприятных тенденций развития семьи делают актуальными как диагностику этих тенденций и поиск путей их разрешения, так и изучение типов, структур, функций и трансформационных механизмов самой семьи.